ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

29.07.2025թ.

ՈՐՈՇՈՒՄ 594-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՔՆԻ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 12 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,16957 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽՎԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ և 25-րդ կետի 1-ին ենթակետերը, «ՀՀ-ում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառնական նշանակությունը փոփոխելու կարգը հաստատելու մասին» 02.02.2002թ. թիվ 88 որոշումը, 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշումը, ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 1-ի N 1053-Ն որոշման և հիմք ընդունելով Արարատ Հակոբյանի 2025 թվականի հուլիսի 17-ի դիմումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հիմք ընդունելով, որ Գորիս քաղաքի Օրբելյաններ փողոցի թիվ 12 հասցեում Արարատ Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող միավորված գույքի 0,16957հա հողամասը ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 1-ի թիվ 1053-Ն որոշմամբ հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության հողամաս՝ հողամասի նպատակային նշանակությունը համարել փոփոխված որպես բնակավայրերի նպատակային նշանակության և փոխել 0,16957հա ընդհանուր հողամասից՝ 0,00114հա, 0,00103, 0,00041հա բնակելի կառուցապատման և 0,00094հա այլ հողերի գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման հողերի ու հողամասում ամրակցված ընդհանուր մակերեսով 537,7քմ քիմմաքրման արտադրամասի (ըստ N18032020-09-0053 վկայականի 267,2քմ արտադրամաս և ըստ N27052025-09-0010 վկայականի՝ 232,8քմ տարածքի) և 46քմ միջանցքի գործառնական նշանակությունը փոխել հասարակական գործառնական նշանակության՝ որպես հասարակական տարածքներ /քիմմաքրման կետ/:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2025թ. հուլիսի 29

ք. Գորիս